

Քննարկված է՝
Հյուսիսային համալսարանի
բժշկական քոլեջի
Մանկավարժական խորհրդի նիստում՝
2023 թ. դեկտեմբերի «26»-ի
որոշմամբ (արձ. №7)
Տնօրեն Ա. Սարգսյան

Հաստատված է՝
Հյուսիսային համալսարանի
Գիտխորհրդի նիստում՝
2024թ. հունվարի «17»-ի
որոշմամբ (արձ. №3)
Ռեկտոր Մ. Մակիչյան

ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ



«ՔՈՒՑՐԱԿԱՆ ԳՈՐԾ»
0913.02.5

մասնագիտությամբ շնորհվող բուժբույր/բուժեղբայր 0913.02.01.05 որակավորում

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

2024 թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀՅՈՒՄՒՄԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ
ԾՐԱԳՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Քույրական գործ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹՎԱՆԻՇԸ	0913.02.5
ՇՆՈՐՀՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ	Կրթական ծրագիրը թույլ է տալիս պատրաստել մասնագետ՝ բուժքույր/բուժեղբայր
ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ	Առկա
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	Առկա՝ հիմնական կրթության հիմքով 4 տարի Միջնակարգ կրթության հիմքով 3
ԾԱՆՐԱԲԵՌՆԱՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ	Միջնակարգ կրթության հիմքով նվազագույն ծավալը 4140 ժամ է ,առավելագույն ծավալը 6642 ժամ, հիմնական կրթության հիմքով ուսումնառության տևողությունը ավելանում է 52 շաբաթով:
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԼԵԶՈՒՆ	Հայերեն
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՂ՝	Մարգարյան Արմինե /քոլեջի տնօրեն / Կարապետյան Արմինե /մեթոդիստ /

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ընդհանուր դրույթներ

- 1.1. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի հիմնավորումը*
- 1.2. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերը*
- 1.3. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի նպատակը*
- 1.4. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի մշակման սկզբունքները*
- 1.5. «Քույրական գործ» *մասնագիտության ուսուցման ձևը /առկա/դիմորդին ներկայացվող պահանջները:*
2. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը /ուրուտները, ձևերը, օբյեկտները, խնդիրները/*
 - 2.1. Շրջանավարտի մասնագիտական գործունեության ոլորտը
 - 2.2. Շրջանավարտի մասնագիտական գործունեության օբյեկտները
 - 2.3. Շրջանավարտի մասնագիտական գործունեության ձևերը
 - 2.4. Շրջանավարտի մասնագիտական գործունեության խնդիրները
 - 2.5. Շրջանավարտի շարունակական կրթության հնարավորությունը
3. «Քույրական գործ» *մասնագիտական կրթության վերջնարդյունքները, նրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին և կրթական չափորոշիչներին*
4. «Քույրական գործ» *մասնագիտական ծրագրի ակնկալվող կրթական վերջնարդյունքների և այն ձևավորող առարկայացանկի համապատասխանությունն ու կապը /քարտեզագրում/:*
5. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության հիմնական կրթական ծրագրի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները*
6. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները /մարդկային, տեղեկատվական, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ֆինանսական/*
7. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» *մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի մասնագետ պատրաստման կրթական ծրագրի իրականացման ընթացքում ուսումնական պրոցեսի բովանդակությունը և կազմակերպումը կարգավորող փաստաթղթեր`*
 - 7.1. Ուսումնական պրոցեսի ժամանակացույց
 - 7.2. Դասընթացների առարկայական ծրագրեր
 - 7.3. Ուսումնական պլան /ուսումնական պլանում ընդգրկված առարկայացանկի ընտրության տրամաբանությունն ու սկզբունքները: `
8. *Պրակտիկաներ:*
9. *Ամփոփիչ ատեստավորում:*

1. Ընդհանուր դրույթներ

Երևանի Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի կողմից իրականացվող միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» **մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագիրը** փաստաթղթերի փաթեթ է, որը մշակվել և հաստատվել է բժշկական քոլեջի առաքելությանը համապատասխան միջին մասնագիտական կրթություն իրականացնելու համար:

«Քույրական գործ» մասնագիտությամբ «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման ընդհանուր և մասնագիտական պատրաստվածության որակը ապահովում է մասնագիտական կրթական ծրագիրը, որը կարգավորում է ամբողջ ուսումնական գործնթացը: Այն հստակեցնում է նպատակը, ձևակերպում ակնկալվող արդյունքները և դրանց համապատասխան մշակում ուսուցման և գնահատման մեթոդաբանությունը: Մասնագիտական կրթական ծրագրում գետեղված են նաև ուսումնական պլանը, դասընթացների առարկայական ծրագրերը, ուսումնական և արտադրական պրակտիկաների ծրագրերը, դրանց իրականացման ժամանակացույցը և անհրաժեշտ նյութատեխնիկական ու ուսումնամեթոդական ապահովածությանը վերաբերող պահանջները: Այն ներառում է նաև պրոֆեսորադասախոսական կազմին ներկայացվող հիմնական պահանջներն ու շրջանավարտի մասնագիտական պատրաստվածության համար անհրաժեշտ փաստաթղթերը:

1.1 Մասնագիտության կրթական ծրագրի հիմնավորումը

Արդի հասարակության զարգացման առաջանցիկ տեմպին այլևս չի բավարարում միայն դիպլոմավորված մասնագետը: Այսօրվա աշխատաշուկան կարիք ունի մրցունակ, իր պահանջները բավարարող, ոչ միայն բարձրորակ գիտելիքներ ունեցող, այլև այդ գիտելիքները հմտորեն կիրառող մասնագետների: Ուստի **«Քույրական գործ»** մասնագիտության շրջանավարտը կարող է զբաղվածություն գտնել իր մասնագիտությամբ, եթե իր աշխատանքին մոտենում է գիտակցելով իր դերը և անելիքը, օժտված է մասնագիտական դերին անհրաժեշտ կարողություններով, ունի հաղորդակցական բարձր մշակույթ, ունի որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն, զինված է տեսական և գործնական գիտելիքներով: Բնականաբար այսօրինակ կրթություն ապահովելու համար ուսուցման միայն ավանդական մեթոդները բավարար լինել չեն կարող և Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջում բոլոր պայմանները ստեղծված են ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառմամբ համագործակցային ուսուցում կազմակերպելու համար: Այս նպատակով ՄՈՒՀ-ն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում ուսանողակներին միջավայրի ստեղծմանը: Միանգամայն հասկանալի է, որ ստացած կրթությունը, որքան էլ այն կատարյալ լինի չի կարող դիմակայել աշխատաշուկայի նետած նորանոր մարտահրավերներին, ուստի շրջանավարտի առջև դրվում է շարունակական կրթության պարտավորությունը:

Այսպիսով, «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը մշակելիս կարևորվում է քոլեջի առաքելությունն ու ժամանակակից աշխատաշուկայի պահանջները, որոնք պարտադրում են իրականացնել՝

- ուսանողակենտրոն միջավայրի ապահովում,
- ուսուցմանը համապատասխան վերջնարդյունքների ձևավորում,
- տեսական և գործնական բաղադրիչների փոխկապակցվածություն,
- համապատասխան ռեսուրսների տրամադրում:

1.2 Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի մշակման համար անհրաժեշտ նորմատիվ փաստաթղթերը

«Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը մշակելու համար ուսումնասիրվել են արտաքին հղման հետևյալ աղբյուրները՝

- ՀՀ օրենքը կրթության մասին (ընդունվել է 14.04.1999թ.),
- ՀՀ օրենքը նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթության մասին (ընդունվել է 08.07. 2005թ.)
- ՀՀ օրենքը հանրակրթության մասին (ընդունվել է 10.07.2009թ.)
- ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակը (ՀՀ կառավարության 07 հուլիսի 2016 թվականի N 714-Ն որոշում)
- Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագիր:
- ՀՀ օրենքը պետական ոչ առեվտրային կազմակերպությունների մասին (ընդունվել է 23.10.2001թ.)
- Միջին մասնագիտական կրթության 0913.02.5 «Քույրական գործ» մասնագիտության 0913.02.01.5 «բուժքույր/բուժեղբայր» որակավորման պետական կրթական չափորոշիչ (ընդունվել է 11.01.2021)

1.3 Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի նպատակը

Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության կրթական ծրագիրը միասնական, ամբողջական, աստիճանակարգված համակարգ է, որի նպատակն է՝

- ՀՈԱԾ-ի 2017թ-ի 5-րդ մակարդակի բնութագրիչներին համապատասխան բարձրորակ կադրեր պատրաստելը «Քույրական գործ» մասնագիտության գծով,
- քոլեջի առաքելությանը համապատասխան՝ գործունեություն իրականացնելու ունակ կադրեր պատրաստելը,

➤ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան՝ ստացած գիտելիքները մասնագիտական ոլորտում կիրառելու կարողություն ունեցող կադրեր պատրաստելը:

1.4 Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի մշակման սկզբունքները

Մասնագիտության կրթական ծրագիրը կազմելու հիմքում ընկած են հետևյալ սկզբունքները.

1) Համակարգվածություն. ենթադրում է, քույրական գործ մասնագիտության բաղադրիչները (առարկաները) ուսումնասիրել ոչ միայն առանձին-առանձին, այլ համակարգված մի ամբողջական ծրագրի սահմաններում: Այսպիսի մոտեցման դեպքում մեկ ընդհանուր համակարգում միավորվում են տարբեր դասընթացներ և բացահայտվում է վերջիններիս փոխադասարկվածությունը: փոխկապակցվածությունը /պրեռեկվիզիտ+կոռեկվիզիտ/¹

2) Կրթության ակադեմիականություն. ներառում է քույրական գործ մասնագիտության ժամանակային և տարածական գործոնները:

3) Գիտականություն. Քույրական գործ մասնագիտության ուսուցումը կազմակերպվում է վերլուծական, կառուցվածքային, գործնական հմտությունների /սիմուլյացիոն հմտություններ/, տիպաբանական մեթոդների կիրառմամբ և համադրությամբ:

4) Կրթության շարունակականություն. անհերքելի է, որ գիտելիքը սահման չունի. մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները կատարելագործվում են ամբողջ կյանքի ընթացքում:

5) Հաջորդականություն, առանց որի հնարավոր չէ համակարգված գիտելիքներ ապահովել:

1.5 «Քույրական գործ» մասնագիտության ուսուցման ձևը /առկա / դիմորդին ներկայացվող պահանջները:

Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետները.

- միջնակարգ կրթության հիմքով 3 տարի՝ ուսուցման ձևը՝ առկա,
- հիմնական կրթության հիմքով 4 տարի՝ ուսուցման ձևը՝ առկա:

«Քույրական գործ» մասնագիտությամբ միջին մասնագետ պատրաստման հիմնական կրթական ծրագրի աշխատածավալը միջնակարգ կրթության հիմքով նվազագույն ծավալը 4140 ժամ է, առավելագույն ծավալը 6642 ժամ, հիմնական կրթության հիմքով ուսումնառության տևողությունը ավելանում է 52 շաբաթով:

Դիմորդներին ներկայացվող պահանջները կարգավորվում են հետևյալ փաստաթղթերով՝

- ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության կարգ (հաստատված է ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 11-ի 597-Ն որոշմամբ),

¹Պրեռեկվիզիտ- առարկաներ, որոնք նախորդում են ուսումնասիրած առարկաներին

2.Կոռեկվիզիտ-պահանջ ուսումնասիրելու 2 առարկաներ, որոնք փոխկապակցված են միմյանց միջև

- Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների տեղափոխման կարգ Ուսանողների (ունկնդիրների) մեկ մասնագիտական ուսումնական հաստատությունից այլ ուսումնական հաստատություն տեղափոխման կարգը հաստատելու մասին 1 հոկտեմբերի 2010 թ. N 1455-Ն
- Մեկից ավելի արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն ստանալու կարգը հաստատելու մասին 12 մարտի 2011 թ. N 194-Ն

2. Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի շրջանավարտի մասնագիտական գործունեության բնութագիրը /ուղորտները, ձևերը, օբյեկտները, խնդիրները/

Կրթական ծրագիրը թույլ է տալիս պատրաստել մասնագետ (բուժքույր/բուժեղբայր) որակավորմամբ:

«Քույրական գործ» մասնագիտությունը առնչվում է

Առողջապահության բնագավառին

1. բնակչության առողջության պահպանումը և ամրապնդումը
2. բուժառությունների կանխարգելում
3. ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարում
4. բուժառուների խնամք
5. առողջության վերականգնում

2.1 Մասնագիտության գործունեության ուղորտները

Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագրի շրջանավարտը **մուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները .**

ա) ընդհանուր պրակտիկայի բուժքույր/բուժեղբայր

բ) թերապիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

գ) մանկաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

դ) վարակաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

ե) նյարդաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

զ) հոգեբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

է) մաշկաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

ը) քիթ, կոկորդ, ականջի բուժառություններում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

թ) ականջաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

ժ) գերիատրիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

ի) վերակենդանացման և ինտենսիվ թերապիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

յ) վերականգնողական և ավանդական բժշկության ոլորտում քույրական գործ իրականացնող բուժքույր /բուժեղբայր

2.2 Մասնագիտական գործունեության օբյեկտները և կարերիայի աճի հնարավորությունները.

- ա) բուժառու/բժշկական կենտրոններ/
- բ) պոլիկլինիկաներ
- գ) ատամնաբուժարաններ
- դ) /Էստետիկ բժշկական կենտրոններ
- ե) բժշկական լաբորատորիաներ
- զ) ուսումնական կենտրոններ
- է) ՆԳՆ փրկարար ծառայություն
- թ) Շտապ բուժօգնության կենտրոն
- ժ) վերականգնողական կենտրոններ
- ի) կրթական հաստատություններ

Կարերիայի աճի հնարավորությունները

Քոլեջի շրջանավարտը ՄՈՒՀ-ն ավարտելուց հետո կարող է ուսումը շարունակել բուհում, ոլորտային, ինչպես նաև ցանկացած մասնագիտությամբ: Բացի այդ ուսումնական ծրագրի վերջնարդյունքները համահունչ են ՈԱՇ-ին, որը թույլ է տալիս ուսումը շարունակել և ստանալ բակալավրի կրթական որակավորում:

2.3 Մասնագիտական գործունեության ձևերը

Միջին մասնագիտական կրթության «Քույրական գործ» **մասնագիտության «Բուժքույր/բուժեղբայր» որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացնել մասնագիտական գործունեության հետքյալ տեսակները.**

- ա) ընդհանուր պրակտիկայի բուժքույր/բուժեղբայր
- բ) թերապիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- գ) մանկաբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- դ) վարակաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- ե) նյարդաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- զ) հոգեբուժությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- է) մաշկաբանությունում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- ը) քիթ,կոկորդ,ականջի բուժառություններում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր
- թ) ժ) գերիատրիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

ի)վերականգնանացման և ինտենսիվ թերապիայում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

լ) վերականգնողական և ավանդական բժշկության ոլորտում քույրական գործ իրականացնող բուժքույր/բուժեղբայր

խ) Քույրական գործը մասնկաբարձությունում և գինեկոլոգիայում:

2.4 Մասնագիտական գործունեության խնդիրները

Սովորողներին զինել.

ա) ընդհանուր զարգացում ապահովող գիտելիքներով

բ) ընդհանուր հումանիտար գիտելիքներ,

գ) սոցիալ-տնտեսագիտական գիտելիքներով

դ) ընդհանուր բնագիտական գիտելիքներով

ե) ընդհանուր մասնագիտական գիտելիքներով

զ) հատուկ մասնագիտական գիտելիքներով

Ձևավորել ու զարգացնել սովորողներին.

ա) առանցքային հմտություններ

բ) աշխարհայացքը

գ) հասարակական վարքը

Դաստիարակել համակողմանի ու ներդաշնակ զարգացած աշխարհայացք ունեցող քաղաքացի:

2.5 Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

«Քույրական գործ» մասնագիտությամբ միջին մասնագիտական կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած շրջանավարտը պատրաստ է կրթությունը շարունակել.

- ստանալ բակալավրի որակավորման աստիճան

ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում սովորողների շահերի պաշտպանությունը

Սովորողների շահերի պաշտպանությունը ներկայացված է Հյուսիսային համալսարանի ռեկտորի՝ «Ուսանողների շահերի պաշտպանության երաշխիքների հրապարակայնությունն ապահովելու նպատակով հանձնարարականով» (23.02.2017թ.), որտեղ հստակ ներկայացված են ՄՈՒՀ-ի գործունեության դադարեցման դեպքում ուսանողների շահերի պաշտպանության միջոցները, երբ.

- քոլեջը վերակազմավորվում է,
- քոլեջը լուծարվում է,
- կասեցվում է քոլեջի կրթական գործունեության լիցենզիան:

3. «Քույրական գործ» մասնագիտական կրթության վերջնարդյունքները, նրանց համապատասխանությունը ՈԱՇ-ին և կրթական չափորոշիչներին

Ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է.

- իմանա ՀՀ Սահմանադրության, զբաղվածության տվյալ բնագավառը կարգավորող հիմնական նորմատիվ ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները
- տիրապետի հայոց լեզվին
- կարողանա հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով
- տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի
- կանոններին
- գիտելիքներ ունենա ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ
- ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ
- ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն
- իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները
- պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տիրապետի առաջին օգնության ցուցաբերման միջոցառումների ծավալին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցները
- տիրապետի իր գործունեության ընթացքում նորմատիվ իրավական փաստաթղթերից օգտվելու հմտությունների
- ձգտի բարձրացնել ինքնագարգացման, որակավորման և վարպետության աստիճանը
- տիրապետի սեփական արժանիքներն ու թերությունները քննադատաբար գնահատելու, այդ արժանիքները զարգացնելու ուղիներ ու միջոցներ գտնելու, իսկ թերությունները չեզոքացնելու կարողություններին

- գիտակցի իր մասնագիտական գործունեության հասարակական նշանակությունն ու կարևորությունը
- տիրապետի տեղեկատվության ձեռք բերման, պահպանման հիմնական մեթոդներին, միջոցներին ու ձևերին, մշակման կարողություններին և համակարգչին իբրև տեղեկատվության հետ կապված աշխատանքների դեկլարման միջոցի
- տիրապետի գլոբալ համակարգչային ցանցում տեղեկատվության հետ աշխատելու ունակություններին
- ծանոթ լինի վթարներից, բնական և այլ աղետներից աշխատանքային կոլեկտիվին, և բնակչությանը պաշտպանելու հիմնական մեթոդներին,
- տիրապետի ֆիզիկական դաստիարակության ու առողջության ամրապնդման ինքնուրույն, մեթոդապես ճիշտ միջոցներ կիրառելու:

Մասնագիտական բնագավառում պետք է.

- Ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ
- Դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և դեկլարանների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն
- Ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն
- Դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն
- Ունենա մասնագիտական գործունեության գործառույթները ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ
- Ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն
- Ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն
- Ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն

- Ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ
- Ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանկ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն

Առանցքային հմտություններից պետք է ունենա

✓ *Հաղորդակցման հմտություններ*

- Ներկայացնի հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
- Կիրառի ուղղակի և անուղղակի հաղորդակցման ձևերը

✓ *Տիրապետի համակարգչային օպերատորական գործի հիմունքներին*

- Տիրապետի տեքստերի խմբագրմանը և ֆորմատավորմանը
- Տիրապետի աղյուսակների պատրաստմանը և խմբագրմանը
- Կատարի գրաֆիկական խմբագրում և նկարագարում
- Կատարի ցուցադրության կազմակերպում արդի համակարգչային ծրագրերով
- Կարողանա աշխատել համացանցում

✓ *Ունենա ձեռնեռեցության համապատասխան հմտություններ*

- Ներկայացնի հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
- Ներկայացնի կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
- Կատարի շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ

• Բնութագրի կազմակերպության ռեսուրսները և գնահատի օգտագործման արդյունավետությունը

• Կատարի ծախսերի հաշվարկ, ձևավորի ապրանքի /ծառայության/ գինը

• Կարողանա մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր

• Կարողանա հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ

✓ *Տիրապետի աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոններին , ցուցաբերի առաջին օգնություն*

• Կազմակերպել աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան

• Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ

4. «Քույրական գործ» մասնագիտական ծրագրի ակնկալվող կրթության վերջնարդյունքների և այն ձևավորող առարկայացանկի համապատասխանությունն ու կապը (տե՛ս Հավելված 2 (քարտեզագրում)):

5. «Քույրական գործ» մասնագիտությամբ կրթական ծրագրի դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները «Վեննի դիագրամ», դասախոսություն, «Փոփոխված դասախոսություն», «Ընդհատված ընթերցանություն», «Պրիզմա», «Քառաբաժան», «Հեղինակի աթոռ», «T –աձև աղյուսակ», «Երեք բանալի մի կողպեք», «Ելքի քարտեր», «Հինգ բույեանոց շարադրանք», «Կմախք», բանավոր անհատական հարցում, ինքնագնահատում, փոխադարձ գնահատում, հայտորոշիչ գնահատում, ձևավորող գնահատում, համագործակցային (խմբային) կամ փոխներգործուն տեխնոլոգիաների կիրառմամբ բանավոր հարցում, թեսթային աշխատանք, սահիկահանդես, խմբային և անհատական աշխատանք , իրացիճակային խնդիրներ

«Քույրական գործ» կրթական ծրագրի յուրացումն ու գնահատումը կանոնակարգվում է ՄՈՒՀ-ում գործող հետևյալ փաստաթղթերով՝

- Կարգ Հյուսիսային համալսարանի բժշկական քոլեջի ուսանողների գիտելիքների գնահատման /կցել/
- Կարգ Հյուսիսայինի համալսարանի բժշկական քոլեջի ուսանողների գիտելիքների ստուգման արդյունքների բողոքարկման կարգ /կցել/

6. «Քույրական գործ» մասնագիտությամբ բակալավրի կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները /մարդկային, տեղեկատվական, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական, ֆինանսական/:

6.1 Պրոֆեսորադասախոսական կազմը

Տարածաշրջանային և միջազգային հարափոփոխ կրթական համակարգում և աշխատաշուկայում ինտեգրումը, այսօր պահանջում են այնպիսի մասնագետներ, որոնք կարող են պահպանել իրենց մրցունակությունը ժամանակի մարտահրավերներին համապատասխան ցուցաբերելով ինքնակրթվելու և կատարելագործվելու կարողություն

Ի թիվս կրթության ավանդական պահանջների ու ՝ ՄՈՒՀ-ի ռազմավարական առանցքային նպատակներից է համարվում նաև սովորողների մեջ քննադատական և վերլուծական մտածողություն, միջանձնային հաղորդակցական հմտություններ, ապագա մասնագիտության նկատմամբ ստեղծագործական մոտեցումներ ձևավորելու և այլ պահանջներ, ինչից էլ բխում են դասախոսների մասնագիտական նորարարությունների տիրապետման և զարգացման առաջնահերթությունները:

«Քույրական գործ» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի իրականացումը պետք է ապահովի մանկավարժական այնպիսի կադրերով, որոնք աչքի են ընկնում բարձրագույն գիտելիքներով, կարողություններով և հմտություններով հետևյալ ոլորտներում.

Մասնագիտական՝

- առարկայական չափորոշիչների ու ծրագրերի իմացություն,
- ունեն առարկաների դասընթացների դասավանդման /մեթոդաբանություն/ ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն և /կամ համապատասխան առարկայի խորացված իմացություն՝ գիտելիքներ, կարողություններ, հմտություններ,
- առարկայի շրջանակներում գիտության նորարարություններին և ժամանակակից տեխնոլոգիաներին տեղեկացվածություն

Անձնային՝

- տարբեր իրավիճակներում ինքնադրսևորվելու և ինքնակառավարվելու կարողություն,
- ուսումնական գործընթացում հնարավոր խնդրահարույց իրավիճակները հարթելու կարողություն,
- ուսումնառողների մոտ սեփական գործունեության նկատմամբ պատասխանատվության, և միջանձնային շփման ընթացքում էթիկայի /դեոնթոլոգիայի նորմեր ձևավորելու կարողություն,
- ունենա հաղորդակցական բարձր մշակույթ,
- ուսումնառողների ներուժի գնահատում,

Մանկավարժական՝

- մանկավարժական նորագույն, ժամանակակից տեխնոլոգիաների իմացություն և կիրառում,
- գործող օրենսդրական նորմերի և իրավական ակտերի իմացություն (ՀՀ Սահմանադրություն, Աշխատանքային օրենսգիրք, ՀՀ օրենքը կրթության մասին, ՀՀ օրենքը միջնակարգ կրթության մասին, ՀՀ օրենքը նախնական մասնագիտական (արհեստագործական) եվ միջին մասնագիտական կրթության մասին օրենք և այլն)
- ուսանողների քննադատական մտածողության զարգացում,
- առարկայի շրջանակում ուսումնառողների վերլուծելու կարողության զարգացում,
- դասապրոցեսը սովորողների տարիքային և հոգեբանական առանձնահատկություններին համապատասխան կառուցելու կարողություն,
- սովորողների միջև միջանձնային և խմբային փոխհամագործակցությունը խթանելու կարողություն, ինչպես լսարանային, այնպես էլ արտալսարանային գործունեություն իրականացնելիս, մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների, եղանակների համադրում,
- մանկավարժական տարբեր մեթոդների, հնարների, եղանակների համադրում,
- սովորողների ուսուցողական-ճանաչողական գործունեության խթանում,
- ուսումնառողների շրջանում սովորելու կայուն դրդապատճառների ձևավորում և խթանում:

Կազմակերպչական՝

- բանավեճեր, քննարկումներ կազմակերպելու կարողություն,
- ուսանողների ակտիվությունը խթանելու կարողություն

- լաբորատոր աշխատանքներ, անհատական խորհրդատվություն, կուրսային աշխատանքներ, արտադրական պրակտիկան ղեկավարելու կարողություն:

Հաղորդակցական՝

- խոսքի բարձր մշակույթի դրսևորում, ինչպես նաև խոսքի կատարելագործման ձգտում,
- միջանձնային հարաբերությունների պայմանական մեխանիզմների ձևավորում դասախոսի կողմից՝ հստակ մշակված խոսք, պահանջների և առաջադրանքների հստակ ձևակերպում, հիմնադրույթների հակիրճ ձևակերպում,
- համակարգչային գրագիտություն, համացանցից օգտվելու կարողություն,
- օտար լեզուների իմացություն,
- օտար լեզուներով մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություն:

6.2 Մասնագիտության կրթական ծրագրի ուսումնամեթոդական ապահովվածությունը

Պարտադիր պահանջ է անհրաժեշտ ուսումնամեթոդական բազայի ստեղծումը, որի շրջանցման դեպքում հնարավոր չէ ապահովել բարձրորակ մասնագետի պատրաստումը: Այն ենթադրում է գրադարանային ֆոնդերի համալրում բոլոր դասընթացների համար մասնագիտական գրականությամբ, ուսումնամեթոդական փաթեթներով: Քոլեջը պետք է համալրվի դասախոսների աշխատանքային թղթապանակներով, որոնցում զետեղված կլինեն դասընթացի համար անհրաժեշտ ամենակարևոր նյութերը:

6.3 Մասնագիտության կրթական ծրագրի նյութատեխնիկական ապահովվածությունը

Քոլեջը պետք է ապահովված լինի դասընթացների տարբեր բաղադրիչների արդյունավետությունը ապահովելու համար պահանջվող նյութատեխնիկական անհրաժեշտ բազայով: ՄԿԾ-ի ուսուցման մեթոդաբանության մեջ գերակշիռ մաս են կազմում համագործակցային մեթոդները, իսկ սա ենթադրում է, որ լսարանների կահավորածությունը պետք է համապատասխանի այդ մեթոդներով դասի իրականացման պահանջներին: Նույն մեթոդաբանության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում նաև ցուցադրությունն ու ինտերակտիվ դասախոսությունները, ինչը ենթադրում է լսարանների հագեցվածություն պրոեկտորներով, ինտերակտիվ գրատախտակներով և համացանցին ու էլեկտրոնային գրադարանների ցանցին միացված համակարգիչներով:

7.«Քույրական գործ» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագրի իրականացման ընթացքում ուսումնական պրոցեսի բովանդակությունը և կազմակերպումը կարգավորող փաստաթղթերը՝

- Ուսումնական պրոցեսի ժամանակացույց
- Դասընթացների առարկայական ծրագրեր
- Մոդուլային ծրագրեր
- Ուսումնական պլան /ուսումնական պլանում ընդգրկված առարկայացանկի ընտրության տրամաբանությունն ու սկզբունքները՝ ընդգրկել բենչմարքինգը/:

7.1 Ուսումնական պրոցեսի ժամանակացույց

Ուսումնական գործընթացի ժամանակացույցը հիմք է ծառայում ուսուցման կազմակերպման համար: Ուսումնական գործընթացի ժամանակացույցը ներկայացված է ուսումնական պլանում:

7.2 Դասընթացների առարկայական և մոդուլային ծրագրեր

